ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՅՈԹԸ ՍԱՐԻ ԵՏԵՎՈՒՄ…» հայրենաճանաչողական-գիտակրթական մրցույթ-փառատոն .. 2
ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԻ ՆՊԱՏԱԿԸ 3
ՆԱԽԱԳԾԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 5
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ 7
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ 8
ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 10
ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 11
ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ 14
ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏ
ԱՇԽԱՏԱՆՔԻ/ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 15
ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ 16

«ՅՈԹԸ ՍԱՐԻ ԵՏԵՎՈՒՄ…»
հայրենաճանաչողական-գիտակրթական մրցույթ-փառատոն
#Յոթը_Սարի_Ետևում

Հովհաննես Թումանյանի թանգարան ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ-ի, Հայաստանի պատմության թանգարան ՊՈԱԿ-ի, ԱրխիոԱրտ և Լաբ հասարակական կազմակերպության, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ ՊՈԱԿ-ի և Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի հետ համատեղ, մեկնարկում են **«Յոթը սարի ետևում» հայրենաճանաչողական-գիտակրթական մրցույթ-փառատոնը**:

Նախագիծը միտված է համայնքային մշակութային ժառանգության ուսումնասիրմանը, պահպանմանը և հանրայանացմանը:

Ամառային արձակուրդները լավ հնարավորություն են հայրենի բնաշխարհը, հուշարձանները, տեղի մարդկանց, նրանց ավանդույթներն ու կենցաղը ուսումնասիրելու, այդ ուսումնասիրություններից հավաքած տեղեկատվությունը մշակելու և հանրայնացնելու, ինչպես նաև վերարժևորելու համար:

Փառատոնի մասնակիցները կարող են ուսումնասիրություններ կատարել իրենց հայրենի բնակավայրում՝ ընտրելով լայն հասարակությանը անհայտ մշակութային ժառանգության օբյեկտ: Հայաստանի բոլոր քաղաքներում և գյուղերում կան մարդկանց կողմից քիչ թե շատ մոռացված հուշարձաններ, գործող կամ անհայտ սրբավայրեր, ավերված կամ խոնարհված եկեղեցիներ, խաչքարեր, փառավոր անցյալի «ականատես» քաղաքատեղիներ, ամրոցներ ու բերդեր, քարավանատներ և այլն: Հնարավոր է, որ այսօր էլ մեր կողքին ապրում են տատիկներ և պապիկներ, որոնք կրում են բարբառներ և գիտեն բազմաթիվ ավանդազրույցներ, լեգենդներ, առասպելներ ու պատմություններ հայոց բնաշխարհի, բույսերի ու կենդանիների, հուշարձանների, տիեզերքի ու մարդկանց, նրանց կենցաղի մասին: Անշուշտ, այդ բանավոր պատումները նրանք լսել են իրենց նախնիներից: Փառատոնի մասնակիցների համար գրի առնլու և ուսումնասիրության նյութ կարող են լինել նաև հարուստ ժառանգության այս շերտը:

Ուսումնասիրությունը նաև պահպանության միջոց է, իսկ պահպանությունը ենթադրում է նաև ֆիզիկական ոչնչացման դեմ ուղղված քայլեր:

ՄՐՅՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԻ ԵՂԱՏԱԿԸ

Ինչպես ճշմարտացիորեն նշում է Հովհ. Թումանյանը, «Մենք մեզ չենք ճանաչում և աշխատում ենք մեզ ճանաչել: Մեզ ճանաչելու համար, հետզհետե մեր շուրջը դիտելով ու մեր ներկան քննելով հանդերձ, ուզում ենք թափանցել մեր անցյալը, ուսումնասիրել մեր հին կյանքն ու պատմությունը:

Վաղուց ասված է, թե անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճանապարհին անմոլոր գնալու համար:

«Ամեն մի ազգի ինքնաճանաչության համար ազգագրությունն ու հնագիտությունը բռնում է առաջնակարգ կարևոր տեղ»:

Եվ այս ճանապարհին չափազանց կարևոր է, որ ***«մեր երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը:*** *Սիրեն ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից, ինտելիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի, առողջ ու բովանդակալի»:*

Դեռ մանուկ օրերից հայրենի բնությունից ստացած ոգեշունչ սերը դեպի հնագիտությունը առիթ դարձավ, որ Թումանյանը ծանոթանար յուրաքանչյուր խաչարձանի, հուշակոթողի կամ մամռակալած, բայց իր մեջ հազար ու մի գաղտնիք պահող քարաբեկորի:

Ինչպիսի՜ ոգևորությամբ է խոսել Թումանյանը Լոռվա բնաշխարհի չքնաղ հուշարձանների մասին, դարձել կենդանի ուղեկցողը Լոռի այցելած իր բոլոր հյուրերի համար: Հաճախ իր հոդվածներում, բանավոր զրույցներում մանրամասներ է հաղորդել Դսեղի պատմությունն իրենց մեջ ամփոփող Սիրուն խաչի, Բարձրաքաշ Սուրբ Գրիգորի վանքի և այլ հուշարձանների մասին:

Եվ ահա, մեր աչքի առաջ ունենալով Թումանյանի օրինակը, փորձենք ինքներս դառնալ մեր գյուղի, մեր համայնքի հնագույն պատմական շերտերի փնտրողը, բացահայտողը, կրողն ու պահպանողը:

Լինել մրցույթ-փառատոնի մասնակից նշանակում է սկսել ճանաչել հայրենի բնակավայրը, չլսված և չտեսնված լեգենդների հետքերով դեպի անհայտ հուշարձաններ կազմակերպել ճանաչողական-գիտական արշավներ: Սա եզակի հնարավորություն է Ձեզ համար՝ բացահայտել Ձեր համայնքը և ականջալուր լինել նախնիների կանչին և պատգամին:

Մրցույթ-փառատոնի նպատակն է.

1. Համայնքի բնակիչների կենսական միջավայր բերել իրենց հարազատ բնակավայրի պատմամշակութային ժառանգությունը, համայնքում ստեղծել հայրենաճանաչողության, համայնքի պատմամշակութային հայտնի և անհայտ հուշարձանների նկատմամբ հետաքրքրություն և հոգատարություն:
2. Մրցույթ-փառատոնի շրջանակում կազմակերպել գիտահանրամատչելի ուսումնասիրություններ իրականացնելու հնարավորություն:

Որպես ուսումնասիրող հանդես է գալիս համայնքի բնակիչը, ով կարող է գտնել իր քաղաքում կամ գյուղում տարիներ շարունակ թաքնված մշակութային ժառանգության արժեքավոր, չուսումնասիրված օբյեկտ, իսկ պատշաճ ուսումնասիրությունների և ներկայացված լավագույն արդյունքի դեպքում արժանանալ հատուկ սահմանված մրցանակային անվանակարգերի:

3. Գտածոները հնարավորություն կտան մասնակցին արժևորելու իրենց համայնքը, մտորելու համայնքի զարգացման տեսլականների մասին. ստեղծելու համայնքը ներկայացնող բրենդը, դարձնելու տուրիստական վայր, զբաղվելու բնակիչների ինքնակրթությամբ և այլն:

4. Մրցույթ-փառատոնը հնարավորություն կտա ծանոթանալու նոր մասնագիտությունների հետ, կօժանդակի կրթությունը շարունակելու և մասնագիտական կողմնորոշմանը:

5. Նախաձեռնել համայնքային ժառանգության ներկայացման համար դպրոցական ցուցասրահներ:

ՆԱԽԱԳԾԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Մրցույթ-փառատոնի ժամկետները

Հայտերի ընդունում *Մասնակիցներն իրենց ընտրած թեմայի նկարագրությունը, համաձայն հայտագրման ձևաչափի, լրացնում են և ուղարկում ընտրող հանձնաժողովին:*	***հունիսի 3-հունիսի 25 (+5)***
Հայտերի քննում և հաստատում *Նշված ժամանակահատվածում կազմկոմիտեի ընտրող հանձնաժողը քննում է բոլոր ներկայացված հայտերը, որոշում դրանց համապատասխանեցումը նախագծի նպատակներին, ապա հաստատում կամ մերժում է հայտը: Բոլոր հաստատված հայտադիմումները հրապարակվում են մեկ օր, ընդհանուր ցուցակով: Հաստատված հայտին կցվում է օժանդակ գրականության ցանկ և առցանց տեքստային աշխատանքի հարթակ՝ «Google doc»:*	***Հուլիսի 1-6***
Գիտ. ղեկավարների կցում *Յուրաքանչյուր մասնակից՝ խումբ, անհատ, ընտանիք, ունենում է գիտական ղեկավար, որն ամբողջ աշխատանքի ընթացքում պետք է ուղղորդի և օգնի աշխատանքի կայացմանը: Գիտական ղեկավարին դիմելու համար կազմկոմիտեն հաստատել է էթիկայի կանոնակարգ:*	***Հուլիսի 6-12***
Ուսումնասիրությունների փուլ *Ուսումնասիրությունների ամբողջ ընթացքը համակարգվում է մ/փ-ի կանոնակարգով, գիտական ղեկավարի անմիջական հսկողությամբ և ուղղորդմամբ: Ուսումնասիրությունների ընթացակարգային հարցադրումները կարող են ուղղվել կազմկոմիտեին, գիտական ղեկվարին և մ/փ-ի կամավորական խմբի անդամներին:*	***Հուլիսի 13-օգոստոսի 30***

Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ *Ուսումնասիրությունների ընթացքում կազմված տեքստային բաղադրիչը,որը ստեղծվել է կազմկոմիտեի կողմից հաստատված ձևաչափին համաձայն, վերջնական տեսքով և բովանդակությամբ ներկայացվում է մասնագիտական հանձնաժողովին՝ մշակված, շտկված: Ներկայացվելուց հետո այն փոփոխության և վերամշակման ենթակա չէ: Նշված օրը «Google doc»-ում փակվում են փոփոխություններ անելու հնարավորությունները և վերջնական է համարվում այն տեսքը, որն առկա է այդ պահին:*	***Սեպտեմբերի 3***
Աշխատանքների քննում *Որպես վերջնարդյունք ներկայացված աշխատանքը տրվում է տվյալ թեմային համապատասխան նեղ մասնագիտական կազմի քննարկմանը, յուրաքանչյուր աշխատանք ունենալու է մասնագիտական գրավոր կարծիք և գնահատականի առաջարկ: (Գնահատման սանդղակը ներկայացվում է կից:)*	***Սեպտեմբերի 3-13***
Անվանակարգային և խրախուսական մրցանակակիրների հայտարարում *Մինչև նախագծի փակման և մրցանակաբաշխության պաշտոնական արարողությունները, առցանց ձևաչափով հայտարարվում է խրախուսական և մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանացանկը՝ առանց անվանակարգերի:*	***Սեպտեմբերի 20***
Արդյունքների ամփոփում *Արդյունքների ամփոփման, մրցանակաբաշխության և փակման հանդիսավոր արարողությանը տեղի կունենա Հովհ. Թումանյանի թանգարանի մատույցներում:*	***Սեպտեմբերի 25***

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Նախագծի մասնակցության ձևաչափերը հետևյալն են.

Անհատական մասնակցության հայտ՝

Մասնակցության այս ձևաչափում ընդգրկվում է անհատ, ով ուսումնասիրում է իր ներկայացրած թեման ինքնուրույն, գիտական ղեկավարի ուղղորդմամբ: Եթե անհատը անչափահաս է, մասնակցում է չափահաս պատասխանատուի ուղեկցությամբ:

Խմբային մասնակցության հայտ՝

Մասնակցության այս ձևաչափում ընդգրկվում են դասարանական կամ տարբեր տարիքային խմբերի մասնակիցներ: Յուրաքանչյուր խումբ չպետք է գերազանցի 10 հոգին: Եթե մասնակիցները անչափահաս են, պետք է ունենան չափահաս խմբի ավագ կամ պատասխանատու: Խմբային կազմը պետք է ունենա անուն և տարբերանշան:

Մասնակցության արդյունքում ձեռք բերված հավաստագրերը, անվանակարգային և խրախուսական մրցանակները տրվում են խմբի անունով:

Ընտանեկան հայտ՝

Մասնակցության այս ձևաչափում ընդգրկվում է մեկ ընտանիք: Ընտանիքի բոլոր անդամները պետք է հավասարապես մասնակցեն նախագծին: Ընտանեկան խմբում կարող է ներառված լինել մրցույթ-փառատոնի կանոնակարգով սահմանված նվազագույն տարիքային շեմից ցածր տարիք ունեցող երեխա, քանի որ այս ձևաչափի նպատակը ընտանիքի ամբողջական մասնակցությունն է:

Ընտանեկան թիմը պետք է ունենա անվանում՝ նախընտրելի է տոհմին վերաբերող:

Մասնակիցների տարիքային չափանիշները

1. «Յոթը սարի ետևում…» հայրենագիտական մրցույթին կարող են մասնակցել 15 և բարձր տարիքի անձինք:
2. Մասնակցել կարող են անհատապես, խմբով և ընտանեկան ձևաչափով:
3. Անչափահաս անհատ մասնակիցը պետք է մասնակցի չափահաս ուղեկցողի հետ (ծնող, ուսուցիչ, եղբայր և այլն):
4. Եթե խմբային մասնակցություն է, խումբը պետք է ունենա չափահաս տարիքի ավագ:
5. Չափահասության տարիք չունեցող մասնակից կարող է լինել միայն ընտանեկան հայտում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Մասնակցության համար անհատը կամ խումբը պետք է ընտրի իր համայնքի մշակութային ժառանգության օբյեկտ*: Ընտրված թեման պետք է համապատասխանի կազմկոմիտեի կողմից հաստատված և հրապարակված թեմաներին: Յուրաքանչյուր տարի նախագծում թիրախավորվելու են մշակութային ժառանգության հատուկ ոլորտներ: Ստորև ներկայացված են թեմաները և ենթաթեմաները: Մասնակցի մրցութային թեման պետք է համապատասխանի ներկայացված կատեգորիաներին:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ
1. Պատմության և մշակութային նշանավոր իրադարձությունների և նշանավոր գործիչների հետ առնչվող կառույցներ
1.1 ԿՈԹՈՂՆԵՐ
1.2 ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ
1.3 ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ
2. Քաղաքաշինական և ճարտարապետական
2.1 ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, ԹԱՂԱՄԱՍԵՐԻ, ՓՈՂՈՑՆԵՐԻ, ԱՅԳԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՑՊԱՏՄԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ
2.2 ԲՆԱԿԵԼԻ, ՊԱԼԱՏԱԿԱՆ, ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
2.3 ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆԵՐ
2.4 ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐ
3. Մոնումենտալ արվեստ
3.1 ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ
3.2 ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ
3.3 ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏԻ ՆՄՈՒՇՆԵՐ
ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ
4. Հայ ժողովրդական երգեր
4.1 ՍԻՐԵՐԳԵՐ
4.2 ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԵՐ
4.3 ՌԱԶՄԻ և ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ
4.4 ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ
4.5 ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

5. Վիպական բանահյուսություն
5.1 ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ
5.2 ԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6. Հմայական բանաձևեր
6.1 ԱՆԵԾՔՆԵՐ ԵՎ ՕՐՀՆԱՆՔՆԵՐ
6.2 ԵՐԴՈՒՄՆԵՐ

Ուսումնասիրության օբյեկտի ընտրության ամրագրում

Հայտադիմումի լրացումը ենթադրում է նաև ուսումնասիրության համար ընտրված մշակութային ժառանգության օբյեկտի ներկայացում: Հայտի հաստատումից հետո ընտրված օբյեկտը փոփոխության ենթակա չէ: Այն ամրագրվում է մրցույթ-փառատոնի աշխարհագրության մեջ և ներկայացվում է մասնագիտական հանձնաժողովին՝ որպես ներկայացվելիք թեմա: Ընտրված թեման պետք է լիարժեք համապատասխանի վերոնշյալ ցանկին:

ԼՐԱՑՈՒՅԻՉ

Ուսումնասիրության առարկա հանդիսացող հուշարձանի ընտրության համար կազմակերպիչները ներկայացնում են մի քանի ուղղորդումներ, որոնք հիմնականում կազմվել են անվտանգության ռիսկերի նկատառումներից ելնելով:

1. Ընտրված թեման պետք է համաձայնեցնել բոլոր խմբակիցների հետ, այդ թվում պատասխանատուի:
2. Ցանկալի է ընտրել համայնքին մոտ, երթևեկելի ճանապարհներով ապահովված հուշարձան:
3. Ընտրել մոտակայքում էլեկտրականության և ջրի աղբյուրներ ունեցող հուշարձան:
4. Բարձր լեռնային, հարուստ խոտածածկույթով, թփուտներով պատված, անտառային ռելիեֆներին մոտիկ հուշարձանները կա՛մ բացառել, կա՛մ ընտրել ավագի, ծնողների, ուսուցչի համաձայնության և խիստ հսկողության դեպքում:
5. Կիսաքանդ, քարաթափումներով հուշարձանները կա՛մ բացառել, կա՛մ ընտրել ավագի, ծնողների, ուսուցչի համաձայնության և խիստ հսկողության դեպքում:
6. Ջրային ավազանների մոտիկ առկայությունը համարել ռիսկային գոտի ֆիզիկական անվտանգության համար:
7. Բանահավաքության դեպքում հավաստիանալ, որ այն անձը, ով հանդիսանում է ուսումնասիրության օբյեկտ, չունի վարակիչ հիվանդություններ, բանահավաքության գործնական փուլում պահպանել սոցիալական հեռավորություն, կրել դիմակ:

---

*Ուսումնասիրության ենթակա մշակութային հուշարձանի ընտրությունը կայացնում է անհատը կամ խումբը, ինչը իրականացվում է պատասխանատուների պարտադիր համաձայնությամբ: Կազմակերպիչ կողմը ընտրության վրա ազդեցություն ունենալ չի կարող:

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1. Հայտերը պետք է ներկայացնել նշված ժամանակացույցին համաձայն՝ հունիսի 7-25-ը, վերջին օրը հունիսի 25-ին հայտերի ընդունումը դադարեցվում է:
2. Հայտը լրացնել հավաստի և գործող տվյալներով:
3. Բոլոր կոնտակտային տվյալները պետք է լինեն հասանելի՝ մրցույթի մեկնարկի նախորդող օրվանից մինչև մրցույթի ամբողջական ավարտը՝ առավոտյան ժամը 10:00-ից մինչ երեկոյան 18:00-ն:
4. Հայտադիմումը պետք է լրացնի
   - Անհատը (եթե չափահաս է)
   - Պատասխանատուն (եթե մասնակիցը անչափահաս է)
   - Խմբի պատասխանատուն՝ ավագը (եթե մասնակցությունը խմբային է)
5. Հայտադիմումը լրացնելուց և ուղարկելուց հետո՝ 3 օրվա ընթացքում կազմակերպիչները, անհրաժեշտության դեպքում, այն կուղարկեն շտկման՝ հետադարձ հաստատմամբ:
6. Հաստատված հայտերը հրապարակվում են մեկ ընդհանուր ցանկով նախապես հաստատված օրը:
7. Ուղղարկված հայտադիմումի տվյալները համարվում են վերջնական և փոփոխության ենթակա չեն՝ բացառությամբ խմբի կազմի փոփոխությունը, որը նշանակում է մասնակցի դուրս գալ խմբից:
8. Հաստատումը ստանալուց հետո խմբի կամ անհատի հետ կազմակերպվում է առցանց քննարկում, որի ընթացքում պարզաբանվում են մրցույթ-փառատոնի գործնական բոլոր մանրամասները:
9. Մեկ անձը կարող է փառատոնում ներգրավված լինել մեկ ձևաչափով՝ մասնակից, պատասխանատու, խմբի ավագ, կրկնակի հայտադիմումը կհամարվի անվավեր, ինչպես խմբի այնպես էլ անհատի համար:
10. Ցանկալի է, որ անհատների և խմբերի մասնակցությունը կոորդինացվի համայնքի դպրոցի կողմից՝ տնօրինության թույլտվությամբ՝ դասղեկի, պատմության ուսուցչի կամ պատմական գիտություններին հարող մասնագետի անմիջական հսկողությամբ, այդ պատճառով հայտադիմումի սնագիր տարբերակը պետք է քննարկել բոլոր օժանդակ կողմերի հետ, հնարավոր հակասությունների բացառման համար:
11. Հայտը լրացնելուց առաջացած բոլոր հարցերի պատասխանները հնարավոր է ստանալ կազմակերպիչներից և ***Ֆեյսբուքյան խմբում***:

ՄՐՅՈՒՅՐ-ՓԱՌԱՏՈՆԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Նախագծի բուն գործնական փուլն ուսումնասիրությունների շրջանն է, որը հաստատված է կանոնակարգով: Հայտադիմումի հաստատման հաջորդ օրվանից մասնակիցը պետք է ինքնուրույն կազմի իր աշխատանքային օրակարգը և սկսի ուսումնասիրությունները:

1. Ուսումնասիրությունների մեկնարկը տրվում է հուլիսի 13-ից: Տևողությունը մինչև օգոստոսի 30-ը ներառյալ:
2. Բոլոր գիտահետազոտական աշխատանքները պետք է իրականացվեն պատասխանատուի, գիտական ղեկավարի անմիջական հսկողությամբ և իմացությամբ: Բոլոր դասարանական խմբերի աշխատանքները պետք է համաձայնեցվեն դպրոցի տնօրինության հետ:
3. Մասնակից խումբը կամ անհատը գիտական ղեկավարին դիմելիս, գործում է կազմակերպիչների կողմից տրված ***էթիկայի կանոններով***:
4. Ուսումնասիրությունների վերջնարդյունք հանդիսացող գրավոր տեքստը հավաքագրվում է կազմակերպիչների կողմից բացված «Google doc»-երում:
5. Ուսումնասիրությունների գրավոր բաղադրիչի շարադրմանը ունենում են հասանելիություն՝ կազմողը, գիտական ղեկավարը, կազմկոմիտեն:

Մեկնարկի օրը արշավախումբը կամ անհատը սկսում է իր ուսումնասիրությունները, որոնք ընթանում են երկու ուղղությամբ՝ տեսական և գործնական:

Տեսական ուսումնասիրություններ

Արշավախումբը /կամ անհատը/ ուսումնասիրում է ընտրած թեմայի վերաբերյալ գիտական գրականություն, կատարում մշակումներ, հավաքչական աշխատանք (հատակագծեր, չափագրություններ, լուսանկարներ և այլն): Ուսումնասիրությունները կոորդինացնում է համայնքի համապատասխան մասնագիտացմամբ ուսուցիչը կամ անկախ գիտնականը: Այս ուսումնասիրությունների ընթացքում մասնակիցները կարող են դիմել կազմակերպիչների օգնությանը, որոնք կփորձեն տրամադրել անհրաժեշտ գրականություն, կամ կազմակերպել մասնագիտական առցանց քննարկում: Մասնագիտական գրականությունից օգտվելը պետք է կազմակերպել նման ուսումնասիրությունների համար կազմված ընթացակարգով:

Գործնական ուսումնասիրություններ

Այցելություն հուշարձանի տարածք կամ բանահավաքության մեկնարկ:

Հուշարձանի այցելության ժամանակ ցանկալի է, որ խումբը /կամ անհատը/ ունենա որոշակի տեսական գիտելիքների պաշար տվյալ հուշարձանի մասին և ծանոթ լինի հուշարձանի ուսումնասիրության **անվտանգության կանոնների՝** ըստ դրա տեսակի:

Օժանդակ աղբյուրներ՝ ուսումնասիրությունների համար

1. Ուսումնասիրության բոլոր փուլերում մասնակիցները կարող են առցանց քննարկումներ ունենալ հնագետների, հուշարձանագետների, մշակութաբանների, ազգագրագետների, ճարտարապետների և տարբեր ճյուղերի մասնագետների հետ՝ կապված հարցերի բովանդակությունից:
2. «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցները լինելու են ուսումնասիրությունների վերահսկողները, նրանք ևս կօգնեն մասնակիցներին գտնելու անհրաժեշտ տեղեկատվությունը:
3. Մարզերի երկրագիտական թանգարանները, գրադարանները ևս կարող են աջակցել մասնակիցներին, ծրագրի համար անհրաժեշտ գրականության և նյութերի փնտրտուքում:

Լրացուցիչ.

Անհրաժեշտ լրակազմի առկայություն՝

1. Մրցույթին մասնակցելու համար անհատը կամ խումբը պետք է ունենա առարկայական լրակազմ և հետևի դրա օգտագործման կարգին:

Լրակազմ.

Հանդերձանքը /գիտահետազոտական արշավի դեպքում/ – հարկավոր է կրել տաբատ, երկար գուլպաներ, ունենալ արևապաշտպան գլխարկ, սպորտային կամ ճտքավոր ոտնամաններ (փակ, լեռնագնացության համար հաստ տակացուով), դիմակ, թաշկինակ, հենափայտ:

Դաշտային պայուսակ - (ուսապարկ կամ հարմարավետ և տարողունակ կտորե տոպրակ)

Դաշտային ուսումնասիրությունների օրագիր (պարտադիր) – օրագիրը նախատեսված է դաշտային ուսումնասիրությունների ժամանակ անհրաժեշտ գրառումները կատարելու համար: Օրագիր պետք է ունենան բոլոր մասնակիցները, մասնակիցը իր օրագրի առաջին էջում պետք է գրի անուն ազգանունը, խմբի անունը, կոնտակտային տվյալները, իսկ էջի ստորին հատվածում մրցույթի կազմակերպիչների կոնտակտային տվյալները:

Գրենական պիտույքներ – Գրիչ, մատիտ և ըստ նախասիրությունների:

Տեսանկարահանող 1 սարք – Ուսումնասիրությունների մեկնարկային և ընթացիկ աշխատանքներից լուսանկարներ և տեսանյութեր ապահովելու համար: Ինչպես նաև աշխատանքի արդյունքում հավաքված ուսումնասիրությունները ներկայացնելիս լրացուցիչ նյութի համար:

՝Ուշադրությու՛ն. լրակազմի ամբողջական առկայությունը ապահովում է մասնակից խումբը կամ անհատը:

▪ Հուշում

Առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներ - Դեղատուփի մեջ անհրաժեշտ է ունենալ ստերիլ փաթեթավորված բինտ կամ անձեռոցիկ, որը պիտանի է երկար պահպանման համար: Ոչ ստերիլ փաթեթավորման բինտը նույնպես անհրաժեշտություն է, քանի որ այն շատ հարմար է հարբուխի ժամանակ՝ որպես մեկ անգամ օգտագործվող թաշկինակ, կամ էլ որպես արյունահոսություն կանգնեցնող սեղմիչ:

Առաջին անհրաժեշտության պարագաներից են նաև.

1. ստերիլ և ոչ ստերիլ բամբակը,
2. սովորական և հականեխիչ կպչուն ժապավենը,
3. կաթոցիկը,
4. քսուքների համար նախատեսված փոքրիկ թիակները,
5. սնդիկային ջերմաչափը,
6. դիմակը՝ քիթ-կոկորդային հիվանդությունների համար:
7. Յոդը, որը կկիրառվի մանր վնասվածքների ախտահանման և տարբեր նպատակների համար: Մեծ տրամաչափի և խորը վերքերի դեպքում այն մշակում են յոդով՝ միայն եզրերից, որպեսզի չգրգռվի առանց այն էլ վնասված հյուսվածքը (այլընտրանք է Բետադինի լուծույթը, որով մշակում են նույնիսկ բաց վերքերը):
8. Կալիումի մանգանաթթուն (մարգանցովկա), որի նոսր լուծույթն օգտագործվում է թունավորման կասկածի ժամանակ՝ ստամոքսի և աղիների լվացման նպատակով: Իսկ խիտ լուծույթով մշակում են խիստ աղտոտված վերքերը:

Գիտաճանաչողական արշավի մեկնարկից 1 օր առաջ

1. Ավագը կապ է հաստատում կազմակերպիչների հետ և տեղեկացնում արշավի մեկնարկի օրվա և ժամի մասին:
2. Ավագը ստուգում է բոլոր մասնակիցների լրակազմը և դրա մասին տեղեկացնում կազմակերպիչներին (ցանկալի է լուսանկարներով կամ տեսանյութով):
3. Ավագը տեղեկանում է բոլոր մասնակիցների առողջական վիճակի մասին մասնակցի ծնողներից:
4. Մեկնարկի օրվանից առաջ հարկավոր է քնել առնվազն 8 ժամ և ճանապարհ ընկնել առավոտյան նախաճաշելուց հետո:

ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Անվանակարգ - 1

● **Պատմաճարտարապետական հուշարձանի «նյութական մշակույթի» ուսումնասիրություն**

Շնորհվում են՝

«Աշխարհիբեկ Քալանթար»

«Նիկողայոս Մառ»

«Թորոս Թորամանյան» (Պահպանության ՊՈԱԿ) մրցանակներ

Անվանակարգ - 2

● **Ոչ նյութական մշակութային ժառանգության ուսումնասիրություն**

Շնորհվում են՝

«Գարեգին Սրվանձտյանց»

«Երվանդ Լալայան»

«Սարգիս Հարությունյան» (ԱրխոԱրտ և Լաբ) մրցանակներ

Անվանակարգ – 3

● **Հայրենի բնաշխարհի և հուշարձանի լավագույն լուսանկար**

Շնորհվում է՝

«Արամ Վրույր» (խրախուսական) մրցանակ

Խրախուսական՝

● **Ամենահետաքրքրական և շարունակելի ուսումնասիրություն անվանակարգ:**

Շնորհվում է՝

«Ղևոնդ Ալիշան» հատուկ մրցանակ («ԱրխեոԱրտ և ԼԱԲ» ՀԿ-ի կողմից):

● **Նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ զուգորդված լավագույն աշխատանք անվանակարգ:**

Շնորհվում է՝

«Հովսեփ Օրբելի» հատուկ մրցանակ (Պահպանության ՊՈԱԿ):

Մրցույթ-փառատոնում շնորհվում է **«Հովհ. Թումանյան»** Գրան պրի մրցանակ (Հովհ. Թումանյանի թանգարան ՊՈԱԿ):

Յուրաքանչյուր տարի սահմանվում է մեկ հատուկ մրցանակ, որը կրելու է պատմամշակութային ժառանգության երախտավորներից մեկի անունը:

● Հատուկ մրցանակ՝ **Սամվել Կարապետյան**

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՕԺՄԴՈՒԹ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Գիտական ղեկավարների հետ աշխատանքային գրաֆիկի կազմումը իրականացնել անմիջականորեն իրենց հետ:
2. Ձեր թեմատիկ ուսումնասիրության հարցադրումները կատարել աշխատանքային օրերին՝ երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 10:00-17:00-ն, կամ անմիջապես նրանցից ստանալ քննարկումների հարմար ժամերի գրաֆիկը:
3. Գիտական ղեկավարների հետ խոսել Դուք-ով, հետագայում, ըստ նրա թույլտվության, անցնել դու-ի:
4. Հետևել նրանց ցուցումներին, իսկ առաջացած հարցերը խմբավորել մեկանգամյա քննարկման համար:
5. Գիտական ղեկավարը ունենալու է որոշակի ուղղորդում նաև կազմկոմիտեի կողմից, ուստի կարևոր է թեմայի ծավալման, կամ թիրախային կետերի ուսումնասիրություններից շեղումը համաձայնեցնել նրա հետ:
6. Գիտական ղեկավարին այցելությունը իրականացնել նրան տեղեկացնելուց հետո:
7. Հետևել աղբյուրագիտական տվյալներից օգտվելու ցուցումներին:
8. Թանգարաններ կամ գրադարաններ գիտահետազոտական այցելություններ կատարելիս մեկ օր առաջ զանգահարել տվյալ կազմակերպություն, ներկայանալ ըստ նախագծի և պայմանավորվել այցելության համար:
9. Արդեն այցելության ընթացքում լինել խիստ հետևողական աշխատակիցների ցուցումներին:
10. Չպահանջել աշխատանքային ժամերից ուշ այցելություն, խոսել Դուք-ով:
11. Ձեր խնդիրը ներկայացնելիս չանցնել մ/փ-ի կանոնակարգով սահմանված գործողությունների թույլատրելի սահմանը, չզբաղվել ինքնագործունեությամբ:
12. Ցանկացած պարզաբանման համար տրամադրել կանոնակարգի հղումը կամ տրամադրել հետադարձ կապի տվյալները կազմկոմիտեի հետ կապվելու համար:

ԽԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Մրցույթ փառատոնի գրանցման, կանոնադրության առցանց հասցե

Պաշտոնական ֆեյսբուքյան էջ.
«Յոթը սարի ետևում» մրցույթ-փառատոն

Պաշտոնական ֆեյսբուքյան խումբ.
«Յոթը սարի ետևում» մրցույթ-փառատոն

Էլ. փոստ. competitionfestival@gmail.com

Կազմկոմիտե
Հեռ. +374 10 56 00 21

Հասցե. ք.Երևան, Մոսկովյան 40

Յոթը սարի ետևում, շա՛տ գանձեր կան...
Հաջողություն քեզ, Հայրենագե՛տ: